

Չորի Բալայան

Արձակագիր, հրապարակախոս, բժիշկ, մարզիկ, ճանապարհորդ, ՀԳՄ անդամ, ՀԽՍՀ պետական մրցանակակիր, Արցախի հերոս

Ծնվել է 1935թ. ԼՂ Ստեփանակերտ քաղաքում: Ավարտել է Ռյազանի (Ռուսաստան) Ի. Պավլովի անվան բժշկական ինստիտուտը: Որպես բժիշկ 1963-73 թթ. աշխատել է Կամջատկայում:

«Վուլկան» և «Հայեգեր» նավակներով Կամջատկայից հասել է Օդեսա՝ անցնելով 22 հազ. կմ:

1970-ին Կամջատկայից կտրել է Խաղաղ օվկիանոսը և հասել Ատլանտյան օվկիանոս:

1973-ին շնասահնակով անցնել է Կամջատկայի և Չուկոտկայի տունդրաները և հասել մինչև Յյուսիսային օվկիանոս: Այս ճամփորդությունների հուշագրությունները հետագայում տպագրվել են:

1973-75թթ. աշխատել է Երևանի բուժական ֆիզկուլտուրայի հանրապետական դիսպանսերում:

Արցախյան շարժման և պատերազմի տարեգիրներից է: 1990թ. սեպտեմբերի 9-20-ը «Մոսկվա» հյուրանոցի իր համարում հայտարարել է հացադուլ՝ պահանջելով վերականգնել ԼՂԻՄ-ի իրավավարչական մարմինները, մարզի սահմանադրական իրավունքները: Գործուն կերպով մասնակցել է Արաքսից մինչև Օմարի լեռնանցք ընթացող ինքնապաշտպանական և ազատագրական մարտերի պլանների մշակմանը:

«Լիտերատուրնայա գազետայի» (Մոսկվա) սեփական թղթակիցն է Հայաստանում, «Բալկանյան շարժման» միջազգային բնապահպանական կազմակերպության համակարգողն է, բազմաթիվ երկրների կողմից Արցախին ցուցաբերվող օգնության կազմակերպիչն ու նախաձեռնողը (ներառյալ Զ. Քոբսի առաքելությունը):

Ժուռնալիստների միության անդամ է:

2004թ.-ից «Կիլիկիա» և ապա «Արմենիա» նավերով ճանապարհորդում է միջնադարյան հայկական առևտրանավերի երթուղիներով:

Երկերից են՝ «Մի բուռ սաթ» (1969), «Հիպոկրատի գլխարկը» (1972), «Թներ» (1988), «Հայկաշենը» (1988), «Դիմակայություն» (1989), «Ճանապարհ» (1989), «Անդունդ» (2004), «Չիմ Կիլիկիա» (2004) և այլն: Նրա «Բաց նամակ նորապսակներին» (1980թ.) գրքույկը տպագրվել է 15 լեզուներով:

